

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՃԱՆՏՔ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԱԶԳԻՐ

փրցնել զօրավարներէն ոմանց կուրծքերէն։ Պէտք էր զօրավարաց ոմանց գօտիները խել իրենցմէ և վզերնուն սեղմել ։ Աւելցուց ապա որ Սանտահագոյի անձնատրուութիւնը միշտ անպատիւ էր և թէ բնաւ ըսածներէն խօսք մը ետ առնելիք չուներ։ Աննկարագրելի շփոթութիւն մը ծագեցաւ և զօրավարն Պրիմօ տէ Ռիվէրա դռնից առ կոմսն Ալմէնաս որ Ահարկ չէ զօրավարները խեղդել իրենց գօտիներով, մեր գօտիներով է որ գոցելու է անոնց բերանը որոնք կը նախատեն զօրավարս ։ Ապա պահանջեց որ տայ այդ զօրավարաց անուանքը և այն ատեն Ալմէնաս իբր գլխաւոր յանցաւորք անուանեց զՐիւանկո, Պրիմօ տէ Ռիվէրա վէշլէր և Ձերվէրա ։

Այսօրինակ աղմուկներ և վեճաբանութիւնք եղան նաև Խոսարանին մէջ, մանաւանդ զոսկակ նիստերու համար։ Վիտաբանութեանց ժամանակ կանխապէս երեսփոխանը, երբեմն պաշտօնեայի ելևմտիկ, նշանաւոր և երկար ճառախօսութիւն մը ըրաւ մեծապէս քննադատելով ըզ-Սաղաստս որ « աւելի իւր փառաբերութեան ծառայած էր քան հայրենեաց » ։ պախարակեց պատերազմի պաշտօնեային, ընդդէմ խօսեցաւ ծովային զօրութեան պաշտօնեային, զոր միայն պատասխանատու համարեցաւ Ձերվէրայի պարտութեան ։ Յետինս շատ դժուարութիւններ յայտնած էր երբ զրկուեցաւ ի կուրս և խընդած էր վարչութեան ղեկավարութիւնը. որուն պատասխան արուածք « Թէ այդպիսի դժուար ժամանակ ի՞նչ ծրագիր կը փնտռէր » ։ Եւ երբ վերջը Ձերվէրա խորհուրդ և աւելի պաշար և մթերք միշտ կը խնդրէր, ծովային զօրութեան պաշտօնեային պատասխան տուած էր « Որ Առտուած օգնէ զեզ » ։ Կանելայառ զոչեց որ ըզմանակ պատասխանատուութիւնը վարչութեան վրայ էր ։ Ծովակալներէն շատերը բողոքովին հակառակ կարծիք ունէին պատերազմի ծրագրին ։ « Եւ եթէ վարչութեան, կամ մանաւանդ ծովային պաշտօնէին անհոգութիւնը չլլայար, նաւատորմիչը պատերազմէն շատ առաջ կը գտնուէր ի Հալանս » ։

Եւ սակայն ծերակոյսը Սեպտեմբեր 11ին և Խոսարանը 13ին ընդունեցաւ վարչութեան առաջարկքը ։ Հարկը այդ կը ստիպէր ։

Մ — Ն .



Անգամ մը հարցուցին գերմանացի գիտնականին մը, որ Հիմնովին ուսումնասիրեր էր ազգաց սովորութիւնները՝ թէ ի՞նչ կ'ընեն արդեօք այսպիսի ազգեր՝ երբ տեսնեն որ ճանճ մը ինկեր է իրենց գարեջրոյ զաւաթին մէջ ։ Անաշառ գիտնականն հետեւեալը կը պատասխանէ .

Սպանիացիին գիրը կը վճարէ և դուրս կ'ելլէ . զաղդիացիին, նախ մատրով ճանճը կը հանէ, և զայն կը ճզմէ, ապա լի բարկութեամբ կը նախատէ պանդոկապետը և ծառաները. անգղիացիին գարեջրոյ գետին կը թափէ, ապա կը պատուիրէ ոտիչ գառաք մը, ու օտար նիւթոց վրայ կը սկսի խօսիլ. գերմանացիին ճանճը կը հանէ և գարեջրոյ կը խմէ. ռուսը ոչինչ բանի մը համար անհանգիստ չեն ըլլար, և ճանճը ու գարեջրոյ միանգամայն կը կլլեն. իսկ յիւսացիք երկու մատով բռնած ճանճը կը հանեն և աղէկ մը շաքարի պէս կը ծծեն, ապա կամաց կամաց գարեջրոյն ալ կը խմեն ։

Սակայն աւելի սովորական ռոճով, առանց գիտութեան կամ գիտնոց դիմելու, այս է, ըստ պատմութեան, այլ և այլ ազգաց սովորութիւնն, երբ տեսնեն որ ճանճ մը ինկեր է ապուրին մէջ ։ Անգղիացիին պնակը ապուրով հանգրծած դուրս կը նետէ. իտալացիին խոհեմ է, ապուրին մէջէն ճանճին ինկած տեղէն զգալով ապուր դուրս կը նետէ. գերմանացիին անայլայլ է, ճանճը պնակին ե. գերքը կը զնէ, և իր սկսի ապուրը ուտել, խուսաթը ճանճն ու ապուրը միասին կ'ուտէ ։

ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵՋ

Ուսումնասէր մը, որուն անտարակոյս չեն պակսիր ոչ ժամանակ և ոչ համբերութիւն, արտօրեր է քննել՝ թէ եւրոպական այլ և այլ տէրութեանց մէջ մարդս որչափ կ'ապրի ։ Իրեն քննութեանց հիմն առնելով՝ 10 տարի առաջ եղած քաղաքական վիճակագրութիւնքը, հետեւեալ զարակացութիւններն ունեցեր է մեր համբերատար Թուարանը ։

ի Շուէտ և ի Նորուեկիա, միլիոն հաշուով,
50 տարի կ'ապրի մարդս. յԱնգղիա 45
տարի և 3 ամիս. ի Պելճիա 44 տարի և 11
ամիս. ի Զուբցերի 44 տարի 4 ամիս. ի Գաղ-
ղիա 43 տարի և 6 ամիս. յԱւստրիա 39 տա-
րի և 8 ամիս. ի Գերմանիա և յԻտալիա 39.
ի Սլաւոնիա 32 տարի և 4 ամիս:

Մեր համարակալը կը ծանուցանէ թէ
Շուէտ, Նորուեկիա, Անգղիա և Պելճիա
տէրութիւնք են յորս մեծազանակ գործածու-
թիւն կայ ալքոհիկ:

Արդ յամպելեաց բացարձակ ժուժկալելու
ընկերութիւնք ինչ կը խորհին այս թուա-
բանին եզրակացութեանց դիմաց:

ԳԱՂՈՒԱԾ 80ԴՈՒԱԾՈՑ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԹԵՐԹԻՑ

ԱՐ. ՄԱՄՈՒԼ (օգոս. 18), Զմեռանիս:

Շէյքսպիր (Դ.) (շար.) — Ա. ՆԱԽԱՐԱՆ: — Տե-
ղազարական պատառիկներ (շար.): — (Սեպ-
տեմբ.) Շէյքսպիր (Ե.) (շար.) — Ա. ՆԱԽԱ-
ՐԱՆ: — Տեղազարական պատառիկներ Գ.
(շար.): —

ԱՐԵՆԻՆԵՐ (Թիւ, 3780) Կ. Պոլիս:

Մայրենի լեզուին դէմ — ՀՐԱՆՑ ԱՍԱՏՈՒՐ: —
(Թիւ 3776) Հայ վարժարանները — Նոյն:
(Թիւ 3785) Կրթական գործը — ԶԱՐԵՀ ԵՈՒ-
ՍՈՒՑԵԱՆ:

ԱՐՄԷՆԻԱ (Օգոստ.), Մարտիկ:

Գրեգոր Արծրունի և հիմակուանները. Մ. ֆ: —
(Օգոստ.) Հայր Շարժթան: (Օգոստ. 31)
Հայեր ի Հնդկաստան:

ԲԻԻԶԱՆԴԻՆ (Բ. Տարի, Թ. 538), Կ. Պոլիս:

Վարդապետը դաւառի մէջ — Թ. Պ. Մ. — (Թիւ,
543) Հայ եկեղեցին կրնայ աղօթել ինք-
նապաւնի մը համար — ԳՆՆԱԴԱՆ: — Դիւան-
դանութիւն թմբադրութեան: — (Թիւ, 551)
Ոսկեղալը — ԳՈՒՍԵՐ ԱՏՈՒ: — (Թիւ 555) Հայք
ի Մանիս — ՍԻՐԱԿ: — (Թիւ 557) Ալեքսանդր
Բարձր լեզուները: — (Թիւ 559) Վերականգնու-
թիւն Բուսնիի հայ զաղթականութեանց:

ԲԻԻԶԱՆ (Օգոստ. 6), Կ. Պոլիս:

Հայ աշուղներ — Տ. Վ. ՊԱՆԵԱՆ: — Յովակիմ
արքեպիսկոպոս Եւդոկիոյ — ԲԱՐԳԵՆ ՎԱՐ-
ԴԱՊԵՑ: — Հարսանեկան սովորութիւններ ու
երգեր Օվաճրգի (Իդմիսի) մէջ — Յ. ԵՍԱԿ-
ՅԵԱՆ: — (Օգոստ. 13) Ստուգաբանութիւն
«Արահեան» ու «Որդայթ» բառերու — ԴԱ-
ԻԻԹ ՍԱՐԳՍԵԱՆ: — Մոռութեամբ հրէ վեր-
լուծումը — Դ. ԻԱՅԱՆՈՒՑ: — Եղիսիաներու
բարբէն — Գ. ԱՐԱՊԵԱՆ: — Դ. Խ: —

ԼՈՅՍ (Օգոստ. 8), Կ. Պոլիս:

Մանկավարժութեան շարժը — Ա: — Նշան-
առքը — Զ. ՀԱՆԵՍԵԱՆ: — Թուացիկ նիւթեր
(շար.) — Լուս. լուս:

ԾԱՂԻԿ (Թիւ, 5), Կ. Պոլիս:

ՈՐՆ Է ամենէն անուշը — Ա:

ՀԱՆՐԱՊԵՏԱՎ (Օգոստ. 13)

Հոգեբանական. 0. ՓԱՓԱՅԵԱՆ: — Պատմական
տեսութիւն դիւանագիտութեան վրայ. 0.
ԵՆԱ: — Շերամբարանութիւնը Բաթթեօնեան
ղրութիւնով. Դ. ԲԱԼԱՏ: —

ՄՇԼԻ (Թ. 136), Տփղիս:

Հայերը իբրեւ վաճառական ժողովուրդ — Ա. Ղ: —
(Թիւ 135, 141, 143, 146.) Բանաստեղծը
Հերոսը — Տ. ՅԱՆԶԱՆԵՍԵԱՆ: — (Թիւ 144)
Լեհաստանի հայերը. Հ. Ա:

ՆՈՐ ԴԱՐ (Թ. 136), Տփղիս:

Գաւառական թղթակիցները նշանակութեան
մասին: — (Թիւ 138) Թատարանի գործը
Կովկասում:

ՆՈՐ ԿԵԱՆՈՐ (Օգոստ. 13), Լուստան:

Լեւոն Թադևոսեան սուրը — ՎԱՀՐԱՄ: — Հայ
ցեղազարութիւն — ԱՆԻՏԳԱՐԱՆ:

— (Սեպտ. 1) Հայ ցեղազարութիւն — ԱՆԻՏԳԱ-
ՐԱՆ:

ՊԱՏԿԵՐ (Օգոստ. 1), Կ. Պոլիս:

Անանիա Նարեկացի (շար.) — ԳՐԻԳՈՐ Վ. ԱԵԼ-
ԳԵԱՆ:

ՏԱՐԱԶ (Թ. 29), Տփղիս:

Գրականութիւն և Մամուլ: — (Թիւ 30) Արա-
ղածի գաղաթիւն — Ե: — (Թիւ 31) Մարաղի
Հայերը — Ե. ԱՐԱՊԵԱՆ:

ՓՈՒՆԶ (Թ. 2611), Կ. Պոլիս:

Գարակէօզեանի կտակը և Բիւզանդիոնի վար-
մունքը — ՅԱՅՈՐ ԱԳԻԼԵԱՆ: —

